ԲՈՒՍԱՀԱՎԱՔՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՈՒՍԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԶԴԻՆԵՐԻ ԿԵՆՑԱՂՈՒՄ

Ռոման Հովսեփյան

Կենսաբանական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, Ավանդական բժշկության համալսարան
ՀՀ, Երևան, Չարենցի փ. 15
Էլ. հասցե՝ roman.hovsepyan@yahoo.com
Հոդվածը ներկայացվել է 16.05.2020, գրախոսվել է 27.05.2020, ընդունվել է տպագրության 03.11.2020

Ներածություն

Կովկասյան տարածաշրջանում եզդիների ամենամեծ համայնքը Հայաստանի Հանրապետությունում է (ավելի քան 35 հազար հոգի): Այստեղ եզդիներն ապրում են հիմնականում Արագած լեռան շրջակայքում, Արարատյան դաշտում և դրանց ու Գեղամա լեռների միջև ընկած տարածքներում՝ Արագածոտնի, Արմավիրի, Արարատի և Կոտայքի մարզերում[1]: Հայաստանի եզդիների մեծ մասը Օսմանյան կայսրության արևելյան շրջաններից XX դ. սկզբներին գաղթած փախստականների սերունդներն են: Նրանց մի մասն էլ, մասնավորապես, Արագածի և Թալինի նախկին շրջաններում բնակվողները, ավելի վաղ եկվորներ են, որոնք եկել են մի քանի փուլերով՝ դեռևս XIX դ. սկզբներից[2]:

Եզդիները կուրմանջիախոս (քրդախոս) և եզդիականություն կամ շարֆադին դավանող ժողովուրդ են: Հայաստանի եզդիներն իրենց արևապաշտ են համարում: Համայնքում կան կաստաներ՝ հիերարխիկ դասակարգումով. շեյխերը և փիրերը կրոնական կաստայի ներկայացուցիչներն են, իսկ մրիդները՝ աշխարհիկ կաստայի[3]:

Ստորև ամփոփ ներկայացնում ենք մեր հետազոտական թիմի 2013-2019 թթ. դաշտային ազգագրական դիտարկումները և էթնոբուսաբանական ուսումնասիրությունները:

---

[1] ՀՀ 2011 թ. մարդահամարի և բնակության պայմանների հաշվառման արդյունքները. բնակչությունը (քաղաքային, գյուղական) ըստ ազգության, սեռի և տարիքի, http://armstat.am/file/doc/99478353.pdf.

[2] Аристова 1990, 66-78.

[3] Ասատրյան, Փոլադյան 1989, 131-150, Dalalyan 2011, 177-201, Asatrian, Arakelova 2014, 5-150, Melkumyan, Hovsepyan 2018, 121-129.

Կենցաղը

Հայաստանի եզդիները ավանդաբար եղել են կիսաքոչվոր անասնապահներ, և ներկայումս էլ նրանց զգալի մասը զբաղվում է ոչխարաբուծությամբ[4]: Հայաստանում եզդիները հիմնականում ապրում են գյուղական և քաղաքամերձ բնակավայրերում[5], որը թերևս պայմանավորված է նրանց վերոհիշյալ տնտեսավարման առանձնահատկություններով: Գարնանը ավելի բարձրադիր շրջաններում ձյան հալվելուն պես ցածրադիր շրջաններում ապրող (ձմեռող) ընտանիքը կամ ընտանիքի մի մասը տեղափոխվում է լեռներ: Արագածի, Գեղամա, Ծաղկունյաց, Վարդենիսի և Շիրակի լեռների լանջերը հեռագնա անասնապահ եզդիների ամառային սեզոնի ավանդական ուղղություններն են: Ամեն տարի նրանք իրենց ամառային կայանները հասնելու համար բարձրանում են սկսած ծ.մ. մոտ 800 մետրից (Արարատյան դաշտ) մինչև ծ.մ. 3300 մ (օրինակ՝ Արագած կամ Աժդահակ լեռները) և անցնում են մինչև 150 կմ (օրինակ՝ Արարատյան դաշտից մինչև Շիրակի հյուսիսային մասերը): Այս տեղափոխությունը կարող է կատարվել անմիջապես կամ մինչև երկու-երեք միջանկյալ կայանումներով՝ միջինլեռնային գոտում, որտեղ եզդիները սովորաբար մնում են մոտ մեկ ամիս: Քոչի վերջնակետը, որպես կանոն, մշտական կայանատեղ է, որն անգամ տասնամյակներով չի փոխվել և սերնդեսերունդ «ժառանգվում է»:

Աշխատանքի բաժանումը

Լեռներում եզդի անասնապահների կենցաղը և աշխատանքը գերծանրաբեռնված են, մանավանդ այն դեպքում, երբ տնտեսությունը հիմնականում կամ միայն ոչխարաբուծական է, և երբ կենդանիներին կթում են, և նրանց գլխաքանակը անցնում է մի քանի հարյուրից (երբեմն կարող է կազմել մի քանի հազար): Կենդանիների խնամքը, շարժը և ապահովությունը վերահսկելը, արածեցնելը, կիթը, կաթի վերամշակումը, պաշարումը և այլ գործերը լցնում են ամառային երկար օրերն ամբողջությամբ՝ արևաածագից մայրամուտ և ավելին: Աշխատում են բոլորը՝ իրենց ունակություններին համապատասխան: Համայնքում (ընտանիքում) առկա է աշխատանքի տարաբաժանում: Տղամարդկանց պարտավորությունների

[4] Ավդալ 1957, 14-21, Дарвешян 1986, 5-15, 52-144, Аристова 1990, 79-108, 154-166, Melkumyan, Hovsepyan 2018, 121-129.

[5] ՀՀ 2011 թ. մարդահամարի և բնակության պայմանների հաշվառման արդյունքները:

մեջ են այն աշխատանքները, որոնց դեպքում «տնից» կամ «գյուղից»[6] շատ են հեռանում, սովորաբար խմբով չեն աշխատում, ուստի ֆիզիկական ուժը և արագ տեղաշարժվելու ունակությունները կարող են ունենալ որոշիչ նշանակություն, իսկ ամենաորոշիչը ռիսկով ուղեկցվող աշխատանքներն են: Այդ աշխատանքներից են կենդանիներին արածեցնելը հեռու տարածություններում, կենդանիների խուզը, մորթը, նախկինում՝ որսորդությունը և այլն: Անվտանգության նկատառումներով կանայք և երեխաները սովորաբար չեն հեռանում կայանատեղիից կամ, եթե հեռանում են, դա անում են միայն խմբով, իսկ երեխաների դեպքում՝ նաև մեծահասակների ուղեկցությամբ: Կանանց առօրյա աշխատանքում թեև ռիսկի գործոնը փոքր է, բայց այն ավելի ծանր և հագեցած է, ուստի կանայք ողջ օրը անցկացնում են բավական ծանր աշխատանք կատարելով: Կանանց աշխատանքային պարտականությունների մեջ են մտնում կենդանիների կիթը, կաթի վերամշակումն ու պաշարելը, ուտելիքի պատրաստումը, երեխաների խնամքը, տարածքի մաքրությունն ապահովելը և այլն: Երեխաներին վստահում են պակաս պատասխանատու աշխատանքներ, ինչպես, օրինակ, երիտասարդ կենդանիներին բնակավայրի շրջակայքում արածեցնելը, մոտակա աղբյուրից ջուր բերելը և այլն:

Բուսահավաքչությունը

Կանանց, երեխաների և երբեմն էլ տղամարդկանց աշխատանքի մի մասն է նաև բուսահավաքչությունը: Տղամարդիկ բուսահավաքչությամբ զբաղվում են լոկ առանձին դեպքերում և ոչ հաճախ, մասնավորապես, երբ հեռու տարածություն կամ դժվարամատչելի վայրեր գնալու կարիք է լինում: Լեռնային հեռու և դժվարամատչելի տարածքներում, որտեղ տարվա զգալի մասը աշխատում և ապրում են եզդի անասնապահները, կենսականորեն անհրաժեշտ մի շարք ապրանքների, օրինակ՝ սնունդ արտադրելու, մատակարարելու կամ հայթայթելու հարցերը հեշտ չէ լուծել անգամ մեր օրերում: Նույնը վերաբերում է դեղամիջոցներին: Բարձրլեռնային շրջաններում, կլիմայական պայմանների պատճառով, գրեթե անհնար է բույսեր մշակելը (եզդիները երբեմն փոքրիկ՝ պաշտպանված սենյակաչափ

[6] Համայնքի անդամներն իրենց բարձրլեռնային կայանատեղին վերաբերվում են գրեթե նույն կերպ, ինչպես ձմեռային բնակավայրին. մի քանի ընտանիքներով տարածքում կայանելու դեպքում այն համարում և անվանում են գյուղ, իսկ վրանային (վերջին տասնամյակներում, երբեմն նաև տնակային) տնտեսությունը՝ տուն:

հողակտորների վրա կարտոֆիլ, համեմունքային կանաչեղեն կամ բողկ են մշակում): Վայրի բնության բուսական ռեսուրսները օգտագործելով՝ եզդիները մի շարք խնդիրներ են լուծում:

Ի տարբերություն բուսաբուծության, վայրի բույսերի հավաքչությունը եզդիների կենցաղի ավանդական և կարևոր մասն է եղել և մնում է: Եզդիական համայնքում բուսահավաքչական, բույսերով կերակուրների և դեղամիջոցների պատրաստման ու օգտագործման մշակույթի հիմնական կրողները փորձառու, համեմատաբար տարիքով կանայք են: Երեխաները բույսերի մասին սկսում են սովորել դեռ մի քանի տարեկան հասակից:

Եզդիները բուսահավաքչությամբ զբաղվում են առավելապես միջինլեռնային (գյուղերում և դրանց շրջակայքում՝ ծ.մ. 1000/1200-2000 մ բարձրության վրա) և բարձրլեռնային գոտիներում (ժամանակավոր անասնապահական կայանների շրջակայքում՝ ծ.մ. 2000 մ-ից բարձր տարածքներում, նկ. 1): Նրանք մի քանի տասնյակ ժողովրդական (հիմնականում՝ եզդիական) անուն վայրի բույսեր են հավաքում և օգտագործում[7]: Ըստ օգտագործման նշանակության, այդ վայրի բույսերը կարելի է բաշխել հետևյալ հիմնական խմբերի մեջ. սննդային (օրինակ՝ *Rumex, Malva, Chenopodium, Amaranthus, Spinacia, Tragopogon* և այլ ցեղերի տեսակներ), թեյային (*Thymus, Mentha, Hypericum*), համեմունքային (*Thymus, Mentha, Allium*) և բժշկական (*Tanacetum punctatum, T. balsamitoides, Echium* spp., *Hypericum perforatum, Plantago major, Tripleurospermus* spp.)[8]: Ստորև ներկայացնում ենք հիմնականում դեղաբույսերը:

Եզդիները՝ հատկապես անասնապահությամբ զբաղվողները, որոնք ամառային սեզոնին քոչում են սարեր, հակված չեն ցածրավայրերում, մասնավորապես Արարատյան դաշտում բուսահավաքչություն անելու, որովհետև կարծում են, որ հարթավայրերի բույսերը չունեն համապատասխան սննդային, համային և բուժական հատկություններ: Այնուամենայնիվ, որոշ վայրի բույսեր երբեմն հավաքում են նաև Արարատյան դաշտում. օրինակ՝ սըլմասկ (կուրմանջիով՝ silmask, թելուկ), տոլըկ (tolik, փիփերթ), բըլք (bilq, կռատուկ), բըլք հավըզ (belgê hewûz, եզան լեզու) և պունգ (pûnig, անանուխ): Ցածրավայրերում եզդիները բուսահավաքչությամբ զբաղվում են հիմնականում վաղ գարնանը, իսկ հետո սովորաբար

[7] Մեկ ժողովրդական անվան տակ երբեմն հավաքվում են մի քանի կենսաբանական տեսակների և նույնիսկ ցեղերի պատկանող բույսեր:

[8] Հովսեփյան և այլք 2014, 148-162, Hovsepyan et al. 2016, 32-41:

բարձրանում են սարերը, որտեղ էլ շարունակվում է բուսահավաքչական գործունեության հիմնական մասը:

Նկ. 1. Եզդի ընտանիքի հավաքած վայրի դեղաբույսերի չորացումը վրանների մոտ (Արագածի հվ. լանջի օբաներ, 09.07.2014)

Դեղաբույսեր և ժողովրդական բժշկություն

Տարվա առնվազն կեսը լեռներում ապրելն ու աշխատելը կարող է մարդկանց համար դժվարհաղթահարելի մարտահրավեր լինել: Անասնապահությամբ զբաղվողները պետք է պատրաստ լինեն գերծանրաբեռնված աշխատանքի և, միաժամանակ, դիմակայել խստաշունչ կլիմային, երբեմն նաև հակահիգիենիկ պայմաններին (վերջինը հիմնականում անցյալին է վերաբերում): Առաջին մարտահրավերը, որին առնչվում է օրգանիզմը հարթավայրերից բարձրլեռնային տարածքներ տեղափոխվելիս (ուղղահայաց տեղաշարժը կարող է հասնել մինչև երկուսուկես կիլոմետրի), մթնոլորտային ճնշման զգալի անկումն է, որը արյան ճնշում ունեցող մարդկանց, հատկապես տարեցների համար կարող է առողջական խնդիրների պատճառ դառնալ[9]: Լեռնային միջավայրի պայմանները բավական խիստ են նույնիսկ ամառվա սեզոնին. ընդհանուր առմամբ, եղա-

[9] Մեր տարեց բանասացներից շատերը, ըստ իրենց պատմածների, առնչվում են այս խնդրին, հատկապես 50-60 տարեկանից հետո:

նակը զով է, քամոտ և փոփոխական: Ուլտրամանուշակագույն ճառագայթներով հարուստ՝ վառող արևով ջերմացած ցերեկներին փոխարինում են ցուրտ գիշերները, երբ ջերմաստիճանը հաճախ +10°C-ից էլ ցածր է լինում: Ջերմաստիճանը և խոնավությունը կտրուկ տատանվում են օրվա ընթացքում. արևոտ եղանակը րոպեների ընթացքում կարող է դառնալ մառախլապատ, անձրևոտ, քամոտ և նույնիսկ ձյունոտ և՝ հակառակը: Ուժեղ քամիները, կարկուտը և ուժեղ կայծակներով ուղեկցվող ամպրոպները ևս սովորական երևույթ են Հայաստանի լեռներում[10]: Այստեղ կայանած անասնապահները իրենց գործի և կենցաղի պատճառով օրվա մեծ մասը վերոհիշյալ միջավայրային խիստ և փոփոխվող պայմանների ազդեցության տակ են: Օրվա փոքր մասը և գիշերը նրանք իրենց վրաններում են, որը դժվար է լավ ապաստարան համարել: Ինչպես կարելի է ենթադրել, այսպիսի պայմաններում ապրող և աշխատող մարդիկ հաճախ են մրսում և բորբոքումներ ունենում, հատկապես շնչառական, միզասեռական և աղեստամոքսային համակարգերի և հոդերի բորբոքումներ:

Լեռներում տղամարդիկ, երեխաները, երբեմն նաև կանայք իրենց աշխատանքի, տնային գործերի կամ խաղալու ընթացքում մաշկային տարատեսակ, հաճախ մեխանիկական վնասվածքներ են ստանում (կտրվածքներ կամ քերծվածքներ): Երբեմն այրում են ձեռքերը և մարմնի այլ մասեր. մեծահասակները՝ կրակ անելիս կամ կերակուր պատրաստելիս, իսկ երեխաները՝ երբ պատահաբար կրակի, տաք իրերի կամ հեղուկների հետ են առնչվում, կպնում կրակարանին, որը վրանի կենտրոնում է գտնվում և բնակելի տարածքի մյուս մասերից առանձնացված չէ:

Թեև լեռնային կայանները իրենց շրջակայքում աղբյուրներ ունեն (կամ, թերևս, ավելի ճիշտ կլինի ասել, որ մարդիկ կայանելու համար ընտրում են այն տարածքները, որտեղ աղբյուրներ կան), ջուրը վրաններ տեղափոխվում է տարաներով, և վրաններում ջրի պաշարները սահմանափակ են: Վրաններում մարդիկ ապրում են անմիջապես գետնի վրա: Նույն վրանում երբեմն պահում են նաև նորածին և մատղաշ կենդանիներին: Դրսում կենդանիներն ազատ են, թեև դրանց ընդհանուր շարժը վերահսկվում է հովիվների կողմից: Աշխատանքի ընթացքում մարդիկ ակամա շփում են ունենում կենդանիների հետ, իսկ դրանց արտաթորանքը անասնապահական կայանների շրջակայքում գետնի վրա ամենուր է: Այսպիսի պայ-

[10] Տեղյակ ենք հարցազրույցներից և սեփական փորձի հիման վրա:

մաններում ծանրաբեռնված աշխատելիս ոչ միշտ է հնարավոր հետևել հիգիենայի կանոններին և ապրելու միջավայրը կատարյալ մաքուր պահել: Ախտածին օրգանիզմների մշտական առկայությունը մարդկանց շրջակայքում ներքին և արտաքին բորբոքումների լրացուցիչ պատճառ կարող են դառնալ:

Իհարկե, վերոհիշյալ խնդիրները միակը չեն, որոնց լեռներում ապրող անասնապահներն առնչվում են, բայց վերջին տասնամյակներում դրանք հիմնականներն են: Դեռևս շատ տարիներ առաջ եզդիները գտել կամ սովորել են իրենց պաշտպանելու և լեռնաբնակ անասնապահների համար ընդհանուր առողջական խնդիրների դեմ պայքարելու միջոցներ: Մեր օրերում նրանք համատարած օգտագործում են վայրի բուսական ռեսուրսները՝ տնային պայմաններում ժողովրդական դեղամիջոցներ պատրաստելու համար: Նրանք սովորել են օրգանիզմը ամրապնդել՝ պրոֆիլակտիկ կերպով որոշակի բուսական թեյեր (թուրմեր) օգտագործելով և բուսական դեղամիջոցներով բուժվելով:

Եզդիները իրենց հավաքած գրեթե բոլոր դեղաբույսերը օգտագործում են որպես հակաբորբոքային միջոց: Ջանթռին (կուրմանջիով՝ gêntrî, ուրց, *Thymus* spp.), պունգը (pûnig, անանուխ, *Mentha longifolia*), «զվերաբոյը»[11] (արևքուրիկ, *Hypericum perforatum* և *H. linarioides*), «անթառամը» (*Helichrysum* spp.), «ռամաշկան» (երիցուկանման բույսերը, *Tripleurospermum* spp., *Anthemis* spp. և Anthemideae-ի այլ ներկայացուցիչներ), ղլիջոտ կամ կլիջոտը (qilîjot, հազարատերևուկ, *Achillea* spp.) համատարած օգտագործվող դեղաբույսեր են[12], որոնք կիրառվում են որպես հակաբորբոքային միջոցներ շնչառական, մարսողական և միզասեռական օրգանների բորբոքումների ժամանակ: Ջանթռին (ուրց) և պունգը (անանուխ) նաև հայտնի են որպես արյան բարձր ճնշումն իջեցնող, կարգավորող միջոցներ: Եզդիների կողմից պակաս համատարած, կրկին՝ որպես հակաբորբոքային դեղաբույսերն են «մայրամախոտը» (*Teucrium polium*), ղանթափան կամ կանթափան (qantapa, *Cephalaria gigantea*), հաուշանը կամ յավշանը (heûşan, օշինդր, *Artemisia absinthium*), կոլիրկա կղիճըկը (kulîrka kîçik, խատուտիկ,

[11] Ромашка-ի, зверобой-ի, մայրամախոտի, անթառամի և էլի մի քանի բույսերի համար եզդիերեն անունների համարժեքները չկան կամ չեն պահպանվել:

[12] Հոդվածում նշվող բույսերի կարգաբանական պատկանելիությունները նույնականացվել են մեր հետազոտական խմբի անդամ Նինա Ստեփանյան-Ղանդիլյանի և հոդվածի հեղինակի կողմից:

Taraxacum spp.), պիսպիսկը (pîspîsik, տատրակ, *Tussilago farfara*), բըլք հավըզը (belgê hewûz, եզան լեզու, *Plantago* spp.), բըլքը (bilq, կռատուկ, *Arctium* spp.) և «ժենշենը» կամ «ժենշինան» (լոշտակ, *Bryonia* spp.): Խաշ-խաշըկը (xaşxaşik, խաշխաշ, *Papaver* spp.) օգտագործվել է հնում. կաթի մեջ ծեծած սերմերը տվել են կրծկեր երեխաներին՝ որպես քնաբեր կամ հանգստացնող միջոց: Այս նույն դեղաբույսերը, ի դեպ, հանրահայտ են նաև հայերի և տարածաշրջանում ապրող այլ ժողովուրդների մեջ:

Նույնը, սակայն, չենք կարող ասել մի քանի այլ դեղաբույսերի մասին, որոնք հանրահայտ են եզդիների մեջ, սակայն քիչ են հայտնի կամ անհայտ հայերի շրջանում: Սիսընդերը կամ սուսընդարը (կուրմանջիով՝ sîsindêr/sûsindar, կետավոր լվածաղիկ, *Tanacetum punctatum*), նրա «քույր» գյարգահուրը (giyergehûr, բալզամակիրանման լվածաղիկ, *Tanacetum balsamitoides* (Asteraceae)) և հավաժոն կամ հեվաժուն (hewajo/hêwajû, իժախոտ, *Echium italicum, E. maculatum, E. vulgare, Alkanna orientalis* (Boraginaceae)) հանրահայտ և համատարած դեղաբույսեր են, որոնք օգտագործվում են Հայաստանի գրեթե բոլոր եզդիական ընտանիքներում:

Սիսընդեր-սուսանդարը հայտնի և շատ արդյունավետ (ինչպես բանասացներն են նշում) հակաբորբոքային դեղաբույս է, որի թուրմը (նկ. 2) գործածում են գլխավորապես միզասեռական համակարգի բորբոքումների և այդ բորբոքումներով պայմանավորված՝ չբերության դեպքում, ինչպես նաև շնչառական և մարսողական համակարգի բորբոքումների ժամանակ: Նույն կիրառությունն ունի նաև գյարգահուրը, սակայն այն հանրահայտ և համատարած չէ (հանրահայտ է միայն Արագածի նախկին շրջանում)՝ ի տարբերություն սիսընդեր-սուսանդարի:

Հավաժո-հեվաժոն եզդիների մեջ ոչ պակաս հանրահայտ և համատարած դեղաբույս է, որի արմատը եռացնում են կենդանական ծագման՝ սերուցքային յուղի կամ ձեթի մեջ և ստանում կարմիր գույնի քսուքանման դեղամիջոց (նկ. 3), որը, ինչպես բանասացներն են վկայում, հրաշագործ վերականգնող միջոց է այրվածքների, քերծվածքների, կտրվածքների և մաշկային բորբոքումների դեպքում: Սիսընդեր-սուսանդարի և հավաժո-հեվաժուի օգտագործումը եզդի ժողովրդի բժշկական ավանդույթների հիմնարար տարրերից են, այս ժողովրդի մշակույթի մասնիկը և երբեմն նաև ազգային ինքնության ցուցիչ են:

Բացի բուժիչ նպատակներով գործածվող դեղաբույսերից, եզդիների կարծիքով, վայրի ուտելի բույսերը նույնպես կանխարգելիչ և բուժիչ հատ-

կություններ ունեն: Հում, նաև եփված տոշոն (tirşo, ավելուկ, *Rumex* spp.), տոլըկը (tolik, փիփերթ, *Malva* spp.), սիրմին (sîrmî, *Allium* spp., սոխ-սխտոր) և շատ այլ վայրի բույսեր, որոնք օգտագործվում են իրենց սննդա-յին հատկանիշների համար, հաճախ ուտում են հատուկ բուժական նպա-տակով՝ հիմնականում աղեստամոքսային համակարգի խնդիրները վե-րացնելու համար:

Նկ. 2. Սիսընդեր-սուսանդարի (կետավոր լվածաղիկ) թուրմը (գ. Ռյա Թազա, 27.09.2014)

Նկ. 3. Հավաժո-հեվաժուի (իժախոտ) արմատի յուղային եփուկը (գ. Հացաշեն, 13.06.2015)

Հետաքրքիր է աչքերն ընդգծելու համար օգտագործվող միջոցը՝ կըլե ճավան (կուրմանջիով՝ kilê çeva), որի մասին շատ քիչ հիշողություն-ներ են պահպանվել: Ըստ որոշ տարեց կանանց, կըլե ճավան (սուրմա) պատրաստել են հավաժոյով (*Echium* spp.) դեղամիջոցի և մրի խառնուր-դից և հաճախ օգտագործել են աչքերի վարակային բորբոքումները բու-ժելու նպատակով:

Տարածքային տարբերություններ

Հավաքվող վայրի բույսերի կազմը գրեթե նույնն է ՀՀ տարբեր մա-սերում ապրող եզդիների շրջանում, թեև կան որոշ տարբերություններ: Օրինակ՝ հավաժո-հեվաժուն (իժախոտ), որը համատարած օգտագործ-վում է տարածաշրջանի կուրմանջիախոս ժողովուրդների կողմից, ինչ-պես նշվեց վերևում, կենսաբանորեն պատկանում է գազտրիկազգիների (Boraginaceae) ընտանիքի տարբեր տեսակների: Հավաժոն Արագածի

նախկին շրջանում (Արագած լեռան հյուսիս-արևելյան կողմում) *Echium maculatum* և *E. vulgare* տեսակներն են, Թալինի նախկին շրջանում այն *Alkanna orientalis* տեսակն է, իսկ հանրապետության այլ մասերում հավաժո դեղաբույսը սովորաբար *Echium italicum* տեսակն է: Ղլիջոտ կամ կլիջոտ (*Achillea* spp.), գյարգահուր (*Tanacetum balsamitoides*), պիսպիսկ (*Tussilago farfara*) և հավշան (*Artemisia absinthium*) (բոլորը պատկանում են աստղածաղկավորների (Asteraceae) ընտանիքին) անուններով բույսերը հանրահայտ են վերոհիշյալ Արագածի շրջանում, բայց ոչ այնքան հայտնի երկրի այլ եզդիաբնակ վայրերում:

Եզրակացություններ

Այսպիսով, կարող ենք փաստել, որ հեռագնա անասնապահ եզդիները բուսահավաքչական մշակույթ ունեն: Ավելին՝ հեռագնա անասնապահությունը նպաստում է բուսահավաքչության զարգացմանը և յուրահատուկ բուսահավաքչական ու ժողովրդական բժշկական ավանդույթների ձևավորման պատճառ է դառնում, որոնք էլ, իրենց հերթին, դարձել են եզդիների մշակույթի և ինքնության մի մասը:

Մեր դաշտային աշխատանքների ընթացքում գրանցված և այստեղ հակիրճ ներկայացված բույսերը և դրանց օգտագործման ձևերը ակնհայտորեն անցյալում եզդիների և ընդհանրապես կուրմանջիախոս ժողովուրդների համար կենսական մեծ կարևորություն ունեցած բուսահավաքչական և ժողովրդական բժշկության մնացորդներն են: Հայաստանի Հանրապետությունն ընդգրկած ուրբանացումը և գլոբալացումը եզդիներին ևս չեն շրջանցում. մեր հետազոտության ընթացքում եզդիների մոտ դիտարկել ենք նաև ավանդական անասնապահական կենսակերպից հեռանալու գործընթաց[13], որի հետևանքով աստիճանաբար աղքատանում է նաև բուսահավաքչական մշակույթը: Այս իրավիճակում կարևոր են եզդի ժողովրդի մշակույթի այս հատվածի մասին ազգագրական տվյալների հավաքումը, ուսումնասիրությունն ու հրատարակությունը՝ պահպանության, պատմագրության, ինչպես նաև դեղագործական նշանակության բուսական ռեսուրսների մասին մեր գիտելիքները հարստացնելու նպատակով[14]:

---

[13] Melkumyan, Hovsepyan 2018.

[14] Այս հոդվածում օգտագործված ազգագրական և էթնոբուսաբանական տվյալները հավաքվել են 2013-2019 թթ. գիտարշավների ընթացքում՝ հիմնականում մեր հե-

Գրականություն

Ասատրյան Գ.Ս., Փոլադյան Ա.Պ. 1989, Եզդիների դավանանքը, Պատմաբանասիրական հանդես, N 4, էջ 131-150:

Ավդալ Ա. 1957, Անդրկովկասյան քրդերի կենցաղը, Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 302 էջ:

ՀՀ 2011 թ. մարդահամարի և բնակության պայմանների հաշվառման արդյունքները. Բնակչությունը (քաղաքային, գյուղական) ըստ ազգության, սեռի և տարիքի, http://armstat.am/file/doc/99478353.pdf. (05.05.2020):

Հովսեփյան Ռ., Ստեփանյան-Ղանդիլյան Ն., Մելքումյան Հ. 2014, Բուսաբուծական և բուսահավաքչական գործունեությունները եզդիների և քրդերի մշակույթներում (նախնական տվյալներ), Պատմաբանասիրական հանդես, N 3 (197), էջ 148-162:

Аристова Т. 1990, Материальная культура курдов XIX – первой половины XX в., Москва, «Наука», 228 с.

Дарвешян М.Х. 1986, Скотоводческое хозяйство курдов Восточной Армении: по материалам второй половины XIX – начала XX века, Ереван, изд. АН Армянской ССР, 147 с.

Melkumyan H., Hovsepyan R. 2018, Economic transitions and land ownership: Challenging traditions among rural Yezidis in post-Soviet Armenia, Anthropology of the Middle East, vol. 13, No. 1, pp. 121-129.

Dalalyan T. 2011, Construction of Kurdish and Yezidi identities among the Kurmanji-speaking population of the Republic of Armenia, in: V. Voronkov, S. Khutsishvili, J. Horan (Eds.), “Changing Identities: Armenia, Azerbaijan, Georgia”, Heinrich BöllStiftung South Caucasus, pp. 177-201.

Asatrian G.S., Arakelova V. 2014, The religion of the Peacock Angel: The Yezidis and their spirit world, London, “Acumen”, 157 p.

Hovsepyan R., Stepanyan-Gandilyan N., Melkumyan H., Harutyunyan L. 2016, Food as a marker for economy and part of identity: on traditional vegetal food of Yezidis and Kurds in Armenia, Journal of Ethnic Foods vol. 3, is. 1, pp. 32-41.

տազոտական թիմի մյուս անդամների՝ Լիլի Հարությունյանի, Նինա Ստեփանյան-Ղանդիլյանի, Համլետ Մելքումյանի և Ավետիս Քեշիշյանի հետ: Հեղինակը խորին շնորհակալություն է հայտնում այս հետազոտության բոլոր մասնակիցներին հյուրընկալության և այս ազգագրական ուսումնասիրություններին մասնակցելու կամեցողության համար: Բուսանունների կուրմանջի լատինատառ տարբերակները տրվում են ըստ եզդիների «Սինջար» ազգային միավորում ՀԿ-ի փոխնախագահ, արևելագետ Մամե Ամիրյանի: Հետազոտությունը ֆինանսավորել է ՀՀ գիտության պետական կոմիտեն (SCS13-6F457):

ԲՈՒՍԱՀԱՎԱՔՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՈՒՍԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԶԴԻՆԵՐԻ ԿԵՆՑԱՂՈՒՄ

Ռոման Հովսեփյան

Ամփոփում

Հայաստանի եզդիները վայրի բույսերն օգտագործում են հիմնականում որպես սնունդ, թեյ, համեմունք և բուժական նպատակներով: Հավաքվող վայրի դեղաբույսերը կիրառում են հիմնականում դրանց հակաբորբոքային հատկությունների համար (եզդիների օգտագործած անուններով՝ ջանթռին, պունգը, զվերաբոյը, անթառամը, ռամաշկան, սիսընդերը, հավաժոն, ղլիջոտը և այլն)՝ շնչառական, մարսողական և միզասեռական համակարգերի բորբոքումները բուժելու նպատակով: Արյան ճնշումը կարգավորող (օրինակ՝ ջանթռին և պունգը) և հակաբորբոքային հատկություններով օժտված որոշ դեղաբույսեր եզդիները օգտագործում են թե՛ բուժական նպատակներով, թե՛ որպես թեյ (ջանթռին, պունգը, զվերաբոյը և այլն): Եզդիների համար խիստ կարևոր, նախընտրելի և հանրահայտ հակաբորբոքային դեղաբույսերը՝ սիսընդերը (կամ սուսընդար) և հավաժոն (կամ հեվաժու) ոչ միայն ժողովրդական բժշկության կարևոր բաղադրիչ են, այլ նաև այս ժողովրդի մշակույթի մաս են կազմում:

Բանալի բառեր՝ եզդիներ, էթնոբուսաբանություն, բուսահավաքչություն, բուսաբուժություն, դեղաբույսեր, կենսապահովման մշակույթ, հեռագնա անասնապահություն:

СОБИРАТЕЛЬСТВО И ФИТОТЕРАПИЯ В ЖИЗНИ ЕЗИДОВ АРМЕНИИ

Роман Овсепян

Резюме

Езиды Армении используют дикорастущие растения как в пище, так и в качестве специй и лечебных средств. Дикорастущие лекарственные травы (езиды их называют джантри, пунг, зверобой, антарам, ромашка, сисендр, аважо, глиджот и др.) в основном используются для лечения воспалений дыхательной, пищеварительной и репродуктивной систем. Некоторые лекарственные растения применяются в качестве гипотензивных

средств для регулирования кровяного давления (например, джантри и пунг). Ряд растений, обладающих противовоспалительными свойствами, завариваются как чаи (джантри, пунг, зверобой и т.д.). Наиболее важные лекарственные растения, популярные среди езидов (сисандр/сусендар и аважо/еважу), являются важным компонентом народной медицины езидов и частью культуры этого народа.

Ключевые слова – езиды, этноботаника, собирательство, фитотерапия, лекарственные растения, культура жизнеобеспечения, отгонное скотоводство.

PLANT-GATHERING AND HERBAL MEDICINE IN LIFE OF YEZIDIS OF ARMENIA

Roman Hovsepyan

Abstract

The Yezidis of Armenia use wild plants for food, tea, flavoring and medicinal purposes. Collected wild medicinal herbs are mainly used for their anti-inflammatory properties (as Yezidis call those, jantri, pung, zveraboy, antharam, ramashka, sisander, hawajo, ghlijot, etc.) to heal inflammations of respiratory, digestive and reproductive systems. Some of the medicinal plants used to regulate blood pressure (for example, jantri and pung) and the ones with anti-inflammatory properties are used for both medicinal purposes and tea (jantri, pung, zveraboy, etc.). The most important anti-inflammatory medicinal plants, preferred by and popular among Yezidis are sisander/susendar and hawajo/hewaju, the traditional use of which is an important component of the Yezidi folk medicine and a part of the culture of this people.

Key words – Yezidis, ethnobotany, plant-foraging, herbal medicine, medicinal plants, life-sustaining culture, transhumance.